

ԼԵՁՈՒՄԳԻՏԵԿԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ ԵՒ ԼԱՏԻՆԱԲԱՆ

ՀԱՅԵՐԷՆ՝

Մեր բարբառների մէջ ընդարձակ տարածութիւն ունի սոյլ «հօշիկ» բառը՝ որ գիտեն Արարկիր, Ապարան, Արճէշ, Բաղէշ, Թաւրիզ, Խոյ, Խլաթ, Հազգօ, Մոկք, Մուշ, Մարաղա, Նոր-Բայազիտ, Շատախ, Ուլմի, Սալմաստ, Սասուն, Սուրմալու, Վան, Բդի, որից կան նոյն իսկ սոյլաւ, սոյլընց բառերը։ Արդ այս բառը լս. սովորաբար կամ ֆրանս. սովորաբար է։ Այս օրինակները բաւական են ապացուցանելու համար՝ որ եւրոպական փոխառութիւնները կրում են ժողովրդական բնոյթ, ուստի և կատարուած են ուղիղ գծով։

3) Ի՞նչ կուտուրական արժէք են ներկայացնում այս փոխառութիւնները։

Յունական և մանաւանդ պարսկական փոխառութիւնները քննելու ժամանակ՝ մենք կարողացանք երեւան հանել կուտուրական այն խոշոր ազդեցութիւնը՝ որ ունեցել էին այդ մեծ ազգերը հայոց վերայ։ Այդ ազդեցութիւնը երեւան եկաւ նրանից՝ որ փոխառութեանց ցուցակում ամէն մի ստորաբաժանումների դէմ բառեր կային։ Այսպէս չեն սակայն եւրոպական փոխառութիւնները, բազմաթիւ ճիւղերի, ինչպէս բնութեան և նրա զօրութեանց մասին, մարդու և մարմնի զանազան մասերին, ընտանիքի կազմութեան, գոյների, վաճառականութեան, շինարարութեան, ուսելիքի և ըմպելիքի, մետաղագործութեան, ճամբորդութեան, ժամանակի եւ տեղի, ինչպէս նաեւ գերանունների, շաղկապների և նմանների վերաբերեալ ոչ մի բառ չկայ ցանկում։ Այս նշան է որ այդ ճիւղերի կողմից եւրոպացիք որեւէ ազդեցութիւն չեն գործել։ Եւրոպական փոխառութիւններ կան կրօնական բաժնում, առ-

տնին տնտեսութեան վերաբերեալ, երկրի և պետական կազմակերպութեան մասին, դրամի ու քաշի մասին, հազուստեղէնի մասին և մի քանի բառ էլ հիւանդութեանց, կենդանիների, երկրագործութեան, անասնապահութեան, արհեստների և տոմարական կեանքի մասին։ Պիտի սահմանափակուենք ուրեմն մենք էլ այս փոքրիկ շրջանի մէջ։

Ամենից ընդարձակ բաժիններն են կրօնականը (10 բառ) և պետականը (35 բառ)։ Այս 45 բառերը՝ որոնք ամբողջ եւրոպական փոխառութեանց 2/3 են կազմում, ուրիշ բան չեն, եթէ ոչ նիւթական ապացոյցներ կամ փաստեր այն իրողութեան, որի մասին պատմութիւնն էլ է վերկայում, այսինքն եւրոպացոց կրօնական և վարչական ազդեցութիւնը. — առաջինը կաթոլիկական ծէսերի ներմուծմամբ և երկրորդը՝ աւատական կարգերի մուտքով կիլիկիոյ թագաւորութեան մէջ։ Աւելացնենք այստեղ միայն այն՝ որ վարչական կամ պետական ազդեցութիւն ասելով պէտք է միայն հասկանանք զուտ քաղաքական ու զինուորականը, այլ նաեւ դատական բառեր, այն է քալիքի ազատականի առաջ իր դատը պաշտպանելը, անսիւղ «դատաստանագիրք կամ մատեան օրինաց», զալունչ «դատական բողոք, գանգատ, արդի բառով հայց», զասեղ «պատժել» սալալալ «վճիռ տակ եղած մի բանի գրաւումը կամ նրա վրայ դրուած արգելքը դատական իշխանութեան կողմից», սալալ «գերաւել», ճմնեղ «պաշտպանել դատա», Ֆալալ «դատը կորցնել» (ընդամէնը 8 բառ)։

Միւս բաժինները միասին ունին ընդամէնը 24 բառ, որ կազմում է ամբողջի 1/3 մասը։ Ամբողջի համեմատութեամբ սա մի փոքր թիւ է, մանաւանդ երբ առնենք իւրաքանչիւր ստորաբաժանումը առանձին և Համեմատութիւնը էլ աւելի կը փոքրանայ, երբ նկատենք որ հիւանդութիւնների, անասնապահութեան և հազուստեղէնի վերաբերեալ բառերից 7 վերաբերում են ձիերի հիւանդութեանց, կազմին, վազքին և ձիաւորի հազուստին. մէկը հաւանեղ «սպաս, կան, կազմած» գրեթէ նոյնպէս ձիերի, որոնք ու զէնքի՝ համար էլ և մէկն էլ զալուն՝ կրօնաւորի վեղարի համար է։ Այսպիսով այս 9 բառերն էլ կ'անցնին իրապէս ասպետական կեանքին (որ է պե-

(*) Շարունակութիւն՝ մեծամեծ նեղիմակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործին (ԼԳ. Գլխի)։

տական) և կրօնականին: Սրանով այս երկուսից զուրա մնացած բառերի թիւը կը վերածուի 15ի:

Երկարագործական բաժնից կայ միայն մի բառ, որ է արճնուկ կամ արցնուկ. սա արեւմտահայոց մէջ կանկալառ, առաւ. apmumak կոչուած բոյսն է, որ տալիս է շատ համեղ մի կերակուր: Այս բոյսը ունի իր հետաքրքրական պատմութիւնը: Սա գիտական լեզուով ցինարա կոչուած բոյսն է, որի ընտանին ծանօթ էր արաբների մէջ ալիարաֆա անունով:

Արաբների ձեռքով բոյսը ներմուծուեց Սպանիա, որտեղից մտաւ իտալիա, Ֆրանսիա, Հոլլանդիա, Անգլիա, ԺՋ. դարի կէսին Շվիցցարիա, այստեղից Գերմանիա և Գերմանիայի վրայով Ռուսաստան: Երկրից երկար անցնելով բոյսի արաբերէն անունը հետզհետէ փոխեց իր կերպարանքը. իտալիայում կոչուած էր արքիչոֆֆո, ֆլորանս. եղաւ արքիօ, գերմ. արքիօֆֆ, որից էլ առաւ. արքիօնկ: Ռուսերինանց շըբջանին իտալական ձեւով ներմուծուելով Կիլիկիա. կոչուել է հայերէն արցնուկ կամ արճնուկ: Չգիտեմ թէ այս բոյսը այժմ էլ մշակու՞մ է Կիլիկիայում, բայց յայտնի է որ Կովկասում և Ռուսական Հայաստանում չկար. միայն անցեալ տարի (1926) մեր տաճկահայ գաղթականները սկսան Երեւանի շուրջը նոյն բոյսի մշակութիւնը և ինչպէս իրենք են ասում, մեծ յաջողութեամբ, որովհետեւ «բոյսը սիրել է հողը»: Առաջին բերքը լինելու էր 1927ի գարնան, բայց արտասովոր ցուրտ ձմեռը մամրողը սառեցրեց:

Անասնապահական ճիւղից կայ միայն ճնիժ «Երկինջ» բառը, որի գոյութիւնը թեւրեւս պէտք է բացատրել կովի մի առանձին եւրոպական տեսակի ներմուծումով դէպի Կիլիկիա:

Առտնին տնտեսութեան բաժինը գիտէ երեք տեսակ ամանեղէնի անուն, որոնք են համազ «բաժակ», մոքրաղ «սանդ», պացին «կոնք», սրանից զուրա կայ մոքս «ամանների բերանը գոցելու յատուկ ձեփ կամ շաղախ». [ստ]: Ամանեղէնի փոխաբերութիւնը երկրից երկիր ծանօթ երեւոյթ է. նորմաոյծ առարկայի հետ գալիս է նաև և իր անունը:

Սրանից զուրա մնում են փողերի ա-

նուններ՝ լիվր, մարկ, սոլ, կշիւթի մի փոքր չափ՝ ունճայ, գրական՝ ջաբխստ «գրքի գըլուխ», զարդեղէնի վերաբերեալ՝ պակ «մի տեսակ կանացի զարդ», և սովորական կեանքի բառերից՝ սալգել «ըմբռնել», ռուայր «սօժիտ», քիթ «գերծ», աչատ:

Սրանով էլ սահմանափակուած է եււրոպական քաղաքակրթութեան ազդեցութիւնը հայ կեանքի վրայ, Կիլիկիայում:

4) Փոխառութիւնները ի՞նչ տարածութիւն ունեցան, արդեօք նրանք սահմանափակուած էին միայն Կիլիկիայում, թէ կային նաև բուն Հայաստանում:

Այս հարցին չի կարելի միանգամից դրական կամ բացասական պատասխան տալ. որոշ բառեր նայելով թէ իրենց նշանակած առարկաները ինչքան տեղ մուտք էին գործել, տարածուած էին նաև աւելի հեռուները, միւսները մնացել էին անշուշտ միայն Կիլիկիայում. օրինակ սոլ բառը՝ ինչպէս տեսանք, հասել է մինչև Կովկաս և Ատրպատական. և մինչև անգամ մուտք է գործել ուրիշ հարեւան ժողովուրդների մէջ. այսպէս քրդերի, զազաների, սասորիների և քաղցէացոյ: — Արմա բառը գիտէ Մինաս Համբեցին. — Կաթոլիկ կրօնի վերաբերեալ բառերը գրաւելու էին նաև Հայաստանի, Ատրպատականի և Վրաստանի կաթոլիկացած շըբջաններում. օր. Երնշակի շըբջանից ունիք զանազան ֆրաներ. — քաղաքական բառերից պարոն և ջամբա ստացել են լայն տարածում, այնպէս որ Սիմէոն կաթոլիկոսը իր հաւաքածոն կոչում է ջամբա: Բայց պէտք է կարծել որ մնացեալ բառերը ընդհանրապէս տեղական նշանակութիւն են ունեցել:

5) Ի՞նչքան կեանք ունեցան այս փոխառութիւնները և մինչև երբ ապրեցան մեր լեզուին մէջ:

Գանի որ, ինչպէս տեսանք, փոխառութեանց մեծ մասը վարչական ու կաթոլիկ կրօնին յատուկ բառեր էին, բնականաբար Կիլիկեան թագաւորութեան կործանումով և եւրոպացոց վտարումով պիտի վերանային: Ժողովրդի մէջ կարող էին իրենց գոյութիւնը շարունակել այն բառերը միայն՝ որոնք զուտ քաղաքակրթական նշանակութիւն ունէին, մինչև որ նոր առարկաներ գալով փոխարինէին նրանց:

3. Բարթուղիմէոսի յաղագս վեցօրեայ արարելութեան:

4. Ս. Թովմայի Ակուինացոյ յաղագս խորհրդոց եկեղեցւոյ:

5. Ս. Թովմայի զիրք ընդդէմ հեթանոսաց:

6. Ս. Թովմայի յաղագս բնութեանց և անձնաւորութեան Քրիստոսի:

7. Պետրոսի Արագոնացոյ զիրք դատաստանաց:

8. Պետրոսի Կանոնագիրք կամ իրաւագիրք:

9. Պետրոսի յաղագս եօթն մեղաց:

10. Նոյնի՝ գիրք առաքինութեանց:

11. Յաղագս սյուլութեանց:

12. Յաղագս խոստովանութեան:

13. Գիրք դժոխոց:

14. Սուր Պետրոսի:

15. Ժամագիրք Դոմինիկեանց:

16. Միսոսայ, որ է Պատարագամատոյց:

17. Ալքիստի Աստուածաբանութիւն:

18. Արիստոտելի վերլուծութիւն ըստտրոգութեանց:

19. Ս. Օգոստինոսի Կանոնք:

20. Կացուցմունք (իւսս սահմանադրութիւն) կարգի եղբայրք քարոզողաց:

21. Գիրք յաղագս հոգւոց:

22. Յաղագս հրեշտակաց:

23. Կայծականց գիրք Բեդայի:

24. Փանծ վարդապետութեան Քրիստոսի:

25. Մեկնութիւն պատարագի Իննովկենտեայ Գ.:

Այս թարգմանութիւնները կատարուել են մեծ մասամբ լատին Բարթուղիմէոս եպիսկոպոսի, Պետրոս Արագոնացու (սպանիացի) ձեռքով, մի քանիսն էլ Յովհան Քանեցու, Յակոբ վարդապետի և Յովհաննէս Զակեցու ձեռքով:

Մեր մէջ տիրում է այն կարծիքը թէ յիշեալ լատին քարոզիչները հայերէն լաւ չիմանալով և կամ գիտմամբ հնարեցին մի նոր աեսակի հայերէն, որ ըստ ամենայնի ձեւուած էր լատիներէն լեզուի վրայ և դրա համար էլ կոչուում է լատինաբան հայերէն:

Այս կարծիքը՝ որի հեղինակը, ինչպէս երեւում է Զարգանաւեանն է (անդ էջ 49), բոլորովին սխալ է: Լատին քարոզիչները բնաւ կարիք չունէին հայերէնի համար

նորանոր ձեւեր հնարելու, նրանք եթէ ազդէն էին հայերէնի գիտութեան մէջ, առ առաւելն քերականական սխալներ պիտի անէին, և ոչ թէ հայերէն նոր նոր ձեւեր կամ տալին հայերէնին մի նոր կազմակերպութիւն, ինչ որ ոչ թէ տգէտի գործ է, այլ ընդհակառակը պահանջում է աւելի մեծ հմտութիւն, միայն ի չարը գործադրուած:

Մեր ասածին իբրեւ ապացոյց բաւական է մէջ բերել մի նմոյշ Դոմինիկեան Փրա Պետրոս Արագոնացու լեզուից՝ (Յառաջաբան Առաքինութեանց գրքի, հանուած Երեւանի թանգարանի Նո. 844 ձեւազրից):

«Վասն այսորիկ ես նուազտ ֆրա Պետրոս ի կարգէ քարոզողաց երանելոյն Դոմինիկոսի կամեցա հաւաքել բանս ինչ ի յառաքինութեանցն որ սփռեալ կայր ի գիրս. թէպէտ փոքրութիւն մտաց իմոց ոչ բաւականաբար առ այժմ վասն դժուարութեանց նիւթոց և արժանաւորութեանց, բայց սակայն յաղթահարեալ ի սիրոյ եղբարցն աղաչանաց ոչ վայել էր ընդդէմ ասել, վասնորոյ ապաւինեալ ի տէրն առաքինութեանցն ի Քրիստոս փրկիչն մեր, որ է զօրութիւն և իմաստութիւն Զօր, համարձակիմ սկիզբն առնել զրոց առաքինութեանց ի յօգուտ խոնարհաց. զի վասն նոցա ասէ Քրիստոս (Մատթէոս ԺԱ.). Գուհանամ զքէն, Հայր, տէր երկնի և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստոց և ի գիտա...»

Ինչպէս երեւում է, այս հայերէնը շատ կանոնաւոր է և լատինաբան կոչուելու ոչ մի պատճառ չունի:

Լատինաբան հայերէնը յօրինուած է աւելի ուշ, ԺԶ. դարուն, Հոռովմում:

ՊՐՈՓ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Երևան-Կիւն)

